# Երեց Բեդնարի այցը Հնդկաստան

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը կնոջ՝ Սյուզան Բեդնարի հետ մեկնել է Հնդկաստան՝ Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությամբ կիսվելու Հնդկաստանի Եկեղեցու անդամների հետ: Հնդկաստանը աշխարհի մեծագույն երկրներից է: Եվ շուտով այն կունենա իր առաջին տաճարը:



Երեց և քույր Բեդնարները այցելել են Ռայահմունդրի քաղաքը: Մինչ այդ այնտեղ երբեք Առաքյալ չի եղել:





Երեխաները սեղմում էին Երեց Բեդնարի ձեռքը:





Հիդերաբադ քաղաքի հանդիպման ժամանակ այս աղջիկը Երեց Բեդնարին հարց տվեց:

«Որքան շատ եմ ճանապարհորդում աշխարհում, որքան շատ ժողովուրդների եմ այցելում, այնքան օրհնված եմ՝ սովորելով շատ մարդկանցից, և այնքան շատ եմ հասկանում, որ ամբողջ աշխարհում մարդիկ հիմնականում նույնն են»:





Յուրաքանչյուրը ուրախ էր լսելու Աստծո Առաքյալի վկայությունը:

## ԳՏԵՔ ՓՂԵՐԻ ՀԱՄԸՆԿՈՒՄՆԵՐ

Հնդկաստանում 30000 փիղ կա: Փղերի քանի՞ նման զույգ կարող եք գտնել ստորև: Որո՞նք են ձեր սիրած կենդանիները, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ստեղծել են:

